

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 12

14 ՄԱՅԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արվամուրթեան դէմ (Խմբագրական)	Տ. Ա.
Վիճակագրութիւն մը	ՅՈՎ. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ
Էջ մը Պալլաքի կեանքէն	ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ
Դրականութիւն եւ...Շուկայ	ՔՐԻՋԱՆԹԷՄ
Աշկունք (Քերթուած Սիւլի Բրիւսով)	ՏԻԴՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ
Դրական կենդանագիրներ. «Դ. Զօհրայ»	ՇԱԻԱՍՊ ԾԻԱԾԱՆ
Տրտնոյթ (Բանաստեղծութիւն)	ԼԵՒՈՆ ՔԻՐԻՇՃԵԱՆ
Հայ գրողին օտւրջը (Նկատողութիւններ)	Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Խմբագրական նօթեր. — Զանազանք.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթօրէրի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար քառսուն դր. եւ զաւանցեալն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ժրանք կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ նրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Զեռ-Քէ կը ծախուի ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلامه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաբուսական

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղմամբիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Ա.դ. տեսակներէն մասնք նշանաւոր են իբր թխորժահամ եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նայնքան խաբժելի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշուորիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կորեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ հոտ եւ մանուշակագուշակութիւն եւ զօրացուցիչ ուն. զուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ձաբոցի Թէլը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յամբուեան եւ Խաղողեան Թէյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաբոցական զօւտ թէյ մասնաւոր եւ դասկան տափերով ու կը հրաւիրէ օգտուել այս տոկոթէն բոլոր մեծք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուորիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկաւան, չինական, Սէյլան եւ Ճապոնի մեծաւ տեսակ թէյեր:

Ուսողորութիւն մարգարի

2-10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիւսաբու (gynécologue), Տօքթօր Էմիլ Զօր 15 տարեւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յոր. գոյ յաճախորդներուն թէ բնականօրէն փոխադրած է Պէքեար փողօց թիւ 18-ից ի վերջիչեւ իր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ սորագոյն մէթատներով շղային եւ հագեկան ու երեւակայական մէկ տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նեվրաթէնի եւ tic անուանուած ոչքի երեսի եւ ուսերու ագեղ եւ ակամայ շարժումները եւ դաշաւի դաղորմակ յոռով հկած շղային խոտվումները եւ րիտասարդական մօլիքները, ինչպէս նաեւ գինիմօլիքը, մօրլֆնամօլիքը եւայլն: Կիրակիներէն զառ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրեթ օրերը ձրեբօր կը դարմանէ վկայեալ աղքատները:

2-10

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրպսեանեակ՝ Մահմաւ-փաշա, Թարագճըլար, Մեծ Նար Ուանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փաշտ թէ՛ մեծաքսէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղօրէից միջոցաւ, առանց օր եւ է որոտ կամ հետք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը: Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը գերծ կը մնան ցեցերու (կիւլէ) կեր ըլլալէ: Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով մնասուած գորգեր:

Սոյն գործարանը կը առանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ. մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնք պէտք է ուղղուին գրասենեակը:

Դիւրամտացելի պայմաններ:

2-10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐԾԵ ԶՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՒՆ ՀՊԿՈՂՈՒԹԵՒՆ ԵՒ ՀԱԿԱԿՈՒՆ ՏԱԿ

Ակիզբէն ի վեր ապաւովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Ակիզբէն ի վեր արձանագրեալ ապաւովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԶՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳՂՈՒՆ ԵՒ ՊԱՀԵՍ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեցաւ համեմատուած թիւնն է 740/0. որով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութիւնն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծրանաւոր ամէնէն նշանաւոր դրամատէրներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիոնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ. Դանաւային ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԻՄ. Նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիոնէի.

Թուրքոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱՄԱՏՈՒՐ

Պոլիս, Սուլթան-Համամ, Բասափ Բաթրճոզլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիոնէի.

ԾԱՆՈԹ.— Ծանաւոր դիւք պիտի տրուի այն ֆինիչիս որ կարելու արդիւնք մը իւր լուծումը ուղիւ անցնապէս: 2—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ բոհաֆիլի ապրանքաց

Մեծ-Շուկայ, Քիւրքճիներու դրան կից, Թ. 41—43

Նշանակէ, արանց եւ կանանց հագուածք հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սուլթան-Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թոհաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց հագուածք հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղւումներէն, եւ դիւրամատ-չիլի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն համարակութեան:

Աղաւ վարդեան մեծաւէտ գոհ թաղուած է իր բազմաթիւ յաճախորդները:

Կ'արժէ որ Շուկայ, Եւզղ մէջն ընտանայցելէ անգամ մը այն երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հաջալու համար:

ՏՕՔԸ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զաւ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղեաց, միզային հոսքաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, իին, եւ նոր գլխական տխրերը: Սոյն վերջին տխրերը առանց ստամոքսի խանգարման՝ եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զարեքաբար օրերը միայն չի: 2—10

ԱՅՐ, ԿԻՆ, ՏՂԱՅ

Մարդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ մանաւանդ տղայ մը։
Թէպէտեւ հարկ չիտեսնուի, հիւանդին պէտք է տալ



SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ
և կը տեսնուի որ

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԴՐՈՒԹԻՒՆ

մարմինը պատող բոլոր տկարութիւններու դեմ
ամենամեծ դեղ է։ Արեգական տակ ասոր հաւասար
բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ որ կը
կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ։

Բոլոր բեռտերէնք և բեռլէնք և ծեծէ։

Հիւանդ մարդ ասոր ուշ-
տրութիւն չիւն պէտք է։

18

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԻԵՆՆԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեսանքի, օժիտի, արկածի, ցման թուակի հիւղեր
VICTORIA ՎԻԵՆՆԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ ԿԵՆՆԵՐ ԿԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ
DE ԲԵՐԼԻՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ
BERLIN ԲԵՐԼԻՆ ՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ
սկսեալ 5 շրջէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար. ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

այսպէս անվարձաբար էլ ուղղակի օգն. Գայս Դանքա

կառավարութեան հսկողութեան ներքին և Բրէտի Լիոնէ

Բեռլին

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵԶԵՃԱՆ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՋՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Պոլիս Բաքրերթողութեան

11-50

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

ԹԻ 12

14 ՄԱՅԻՍ 1905

ԱԼՔՈԼԱՍՏՈԼՈՒԹԵԱՆ ԴԵՍ

ՔԱԻՇԱՆՃԵԱՆ—ՄՐՑԱՆԱԿԸ

Ուրախ եղանք տեսնելով, ինչպէս կը յուսայինք արդէն, որ մեր յարգելի պաշտօնակիցները՝ Արեւելք, Բիւզանդիոն, Մանգուսէ և Սուրհանդակ՝ ինքնայօժար փութացին արտադրել Մասիսի նախորդ թիւին մէջ հրատարակուած Յովհ. Էֆ. Թաւշան՝ ձեանի գեղեցիկ նամակը որ ալքոլամոլութեան աղէտները համառօտակի՝ բայց շատ ցայտուն կերպով մատնանշելով, դրամական մրցանակներ կը խօստանար լաւագոյն յօդուածները գրողներուն և զանոնք հիւրընկալող թերթերուն, միակ նպատակ ունենալով՝ այդ մոլութեան յարողները հնար եղածին չափ հրաժարեցնելու և անոր զոհերը պակսեցնելու ձգտիլ։ Հարկ չիկայ անգամ մըն ալ չեղտել այս հրապարակային հրաւերին ու հաստատուած մրցումին գերազանցապէս մարդասիրական հանգամանքը, որ անշուշտ նոյնքան գրգիռ մը պիտի ըլլայ մեր հրապարակագիրներուն ու գրագէտներուն, որչափ խօստացուած մրցանակները, որոնք՝ մեր լրագրութեան համեստ սահմանին մէջ՝ արհամարհելի գումարներ չեն։ Մնաց որ, Թաւշանձեան Էֆ.ն կ'աւելցնէ թէ «Մրցանակ ստացող յօդուածագիրները ազատ են անշուշտ իրենց ստացած գումարը բարեգործական հաստատութեան մը նուիրելու, եթէ ուզեն, այնպէս որ այս նիւթին վրայ յօդուած գրող մը անպարտաճառ մրցանակ չահելու համար գրած չըլլար, եթէ նոյն իսկ մրցման դէն իր յօդուածը կամ յօդուածները»։ Այս կէտը չեղտել կարեւոր էր մեր այն գրագէտներուն

ընդհանուր մասնաւորապէս, որոնք լրագրութենէ տարբեր ասպարէշներու մէջ կը գտնուին, ինչպէս բժիշկ, փաստաբան, արուեստագէտ, և այլն, ու իբրեւ amateur միայն կերեւան երբեմն՝ իրենց գրական ու իմաստասիրական գրուածքներով որոնք կը փնտռուին միշտ սակայն։ Փափագելի էր որ անոնք ալ գրիչ շարժէին ալքոլամոլութեան դէմ։

Իսկ ընդհանուր կերպով, գրչի տուօրեայ գործունէութիւն ունեցող ամէն հրապարակագիրներէ, գրագէտներէ, խմբագիրներէ, յօդուածագիրներէ, — Պոլսեցի թէ գաւառացի, — կը սպասուի որ իրենց հարկի բաժինը նուիրեն այս հակալքողական պայքարին, որ պիտի կատարուի բոլորովին ինքնատիպ եղանակով մը՝ լրագրութեան միջոցաւ։ Ամէն գրող իր անձնայատուկ ոճը, ձեւը ու ճաշակը կրնայ ունենալ, զոր չեն սահմանափակեր մրցման պայմանները որոնք շատ պարզ են, — իւրաքանչիւր յօդուած 1000 բառէ աւելի ու 1500 բառէ պակաս պէտք է ըլլայ։ Այսչափ միայն։ Բառերու այս հաշիւը դիւրաւ բացատրելու համար մեր աշխատակիցներուն, աւելցնենք թէ Մասիսի իւրաքանչիւր էջը (երկու սիւնակ) միջին հաշուով 550 բառէ կը բաղկանայ, այնպէս որ յօդուածները պէտք է գրուած ըլլան այն չափով որ մեր շաքաթաթերթին երկու էջէն (չորս սիւնակ) պակաս տեղ չի գրաւեն, ո'չ ալ երկուքէս էջէն (հինգ սիւնակ) աւելի։ Անցողաբար վեր առնենք նաև սա պա-

բազան թէ, որովհետեւ գրուելիք յօդուածները ո՛չ միայն պիտի խօսին ալքօլի վնասներուն՝ այլ դարմանին վրայ ալ, մեր գրչի տէր բժիշկները կրնան մասնակցութեան լայն բաժին մը ունենալ այս ճիւղին մէջ, գրագէտներուն հետ հաւասարապէս որոնց նրբին դիտողութիւնները, խորհրդածութիւնները կամ ուրիշ ինչ որ գրել ուզեն, մեծապէս ազդեցիկ կրնան ըլլալ արեւոյդներու մտքին վրայ։ Բառին բուն նշանակութեամբ՝ զուտ Գրական Մրցում մը չէ ասիկայ, այլ աւելի՛ ժողովրդային յօդուածներու մրցում մը, թէեւ պէտք է որ կրեն անոնք գրական դրոշմ, ոճի խնամք, լեզուի յստակութիւն։ Այս մանրամասնութիւնները կը պարզենք ոչ թէ մեր սովորական աշխատակիցներուն համար, — որոնք պէտք չունին անոնց և որոնց անգամ մըն ալ կը կրկնենք Մասիսի խմբագրութեան կողմէ ջերմ հրաւեր մը՝ իրենց աշխատակցութիւնը նուիրելու նաեւ այս հաճելի առթիւ, — այլ պատահական գրողներու հա-

մար որոնց առջեւ ալ բաց պիտի ըլլան մեր էջերը, կը բաւէ որ հրատարակելի հանգամանք ունենան իրենց յօդուածները։

Թաւաճեալ է քիմիա համեստութիւնը վիրաւորելու երկիւղը կը կասեցնէ զմեզ խօսիլ իր անձին վրայ, որ ինչպէս ունեցաւ ուրիշ հանրօգուտ նախաձեռնութիւն մը՝ կրօնային — գրականութեան ճիւղին մէջ, գրաւոր քարոզներու մրցումը հաստատելով, այս անգամ աւելի գործնական մտածումով մը եւ իրական կեանքը աւելի՛ մօտէն չօշափող հարցով մը կը հետաքրքրուի ու ընկերային վէրք մը՝ ալքոլամոլութիւնը՝ իր ազետալի հետեւանքներովը հանրութեան առջեւ պատկերացնելու հրաւեր կը կարգայ գրողներուն։ Նպատակը բարի է եւ միջոցը շատ վայելուչ։ Արդէն, օրաթերթերուն կողմէ ցոյց տրուած փութկոտ եւ տաք վերաբերումը առաջին հաւաստիք մը եղաւ այն նպատակաւոր ընդունելութեան որուն արժանի էր այդ հրաւերը։ Կը յուսանք թէ աբդիւնքը պիտի արդարացնէ այս տպաւորութիւնը։

S. Ա.

Տ Ե Ր Տ Ո Ւ Ն Զ Զ

ՍՈՒՈ. Գ. Ս.

Անհրաժեշտ շնորհներու, բոյրի, թոյրի,
Խնչո՛ւ զիս, Տէ՛ր, մըլտընջօրէն ըրի՛ր գերի,
Վարդ—երազի կենցաղն այս զուտ ցընորահիւս,
Զունի՛ երբեք հուսկ կայան մը փարոսալոյս։

Դո՛ւ, Արարիչ, որ ժայռերուն մըլտալեկոծ,
Շընորհեցիր կարծրութիւն մը անյոյզ, անլոյծ,
Է՛ր զգայնիկ սիրտ մը դըրժր այս կուրծքին տակ,
Սիրտ մ'որ կ'երգէ, յուզուի, գոռայ անըպատակ։

Լուսինն ահա՛, ա՛լ ձանձրացած՝ երազելէն,
Խաւարին մէջ գընաց փնտռել իր ապաւէն,
Վարդի թերթերն թօթափեցան մեծ անուրջէն
Ու արդ հողին հետ գիրկընդխառն, հեշտ կը նընջեն։

Բայց, Տէ՛ր, այս սիրան թըրթըռալէն ա՛լ յոգնատանջ,
Պիտի գանձ՝ անկիւն մ'անքոյթ, լուռ, անձաճանչ,
Հո՛ն թաղելու վաղածընունդ տարփանքներուն
Յետին խարոյկն, զոր դեռ պահէ յար վառվռուն։

Լոյս—ժըպիտի, գեղի, շնորհի ու բիւրաղան
Նազանքներու, երկի՛նք, է՛ր զիս ըրի՛ր վազան,
Այս սիրալառ յիշատակաց խօլ արշաւանք
Ըսէ՛ք ամպեր, ըսէ՛ք հովիտի՛ր, ո՛ւր կ'առնէ կանգ։

ԼԵՒՈՆ ՔԻՐԻԵՃԵԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ՆՈՒՆԵՐԻՆ, 3 Մայիս 1905

Յարգոյ խմբագիր Մասիսի

Երէկ Ձեզի յօդուած մը զրկեցի որ առաջարկութիւն մըն ալ կը պարունակէր(*): Այս առաւօտեան թերթերուն մէջ հրատարակուած յօդուածէ մը հետեւեալները կը քաղեմ, որոնք մօտէն յարաբերութիւն ունին խնդրոյն հետ:

Միացեալ Նահանգաց 81,752,000 բնակիչներուն իւրաքանչիւրը տարին 18 տօլար (գրեթէ 4½ օսմ. ոսկի) կը ծախսէ ոգելից ըմպելեաց համար. կամ 91 տօլար (22 օսմ. ոսկի) իւրաքանչիւր ընտանիք՝ բաղկացած հինգ անդամներէ: Հուլիսի դործածութիւնը 1896ին 1.01 կալօն էր իւրաքանչիւր բնակչի համար, մինչդեռ 1904ին 1.48 եղած է, գինիի սպառումը միեւնոյն ժամանակամիջոցին մէջ կրկնապատկուած է, իսկ գարեջուրի դործածութիւնը՝ հարիւրին 18 միայն. իսկ ամէն ոգելից ըմպելիք միասին առնելով 21% աւելցած է:

Սուրճ, թէյ և քաքաօի համար տարեկան 220,895,525 տօլար ծախսուած է, իսկ ոգելից ըմպելեաց համար 1,277,727,190, որ առջի տարուան վրայ 50,000,000 տօլար աւելի է:

Բանակութեան հաշուով՝ սուրճը աւելի սպառած է քան գարեջուրը, այսինքն 1,653,955,254 կալօն սուրճ սպառած է, իսկ 1,494,191,325 կալօն գարեջուր. թէյ՝ 475,000,000 կալօն, իսկ գինի և այլ զօրաւոր ըմպելիքներ 158,640,796 կալօն:

(*) Ծ. Խ. — Մասիսի նախորդ թիւով հրատարակուած յօդուածէն ետք, ստացանք ներկայ նամակը, որ միեւնոյն նիւթին՝ ալքոլամոլութեան վրայ կը խօսի: Ինչպէս կը տեսնուի, Թուլանճեան էֆ.ն սրտանց փարած է այս հանրագումար հարցին եւ իր առեւտրական ծանր զբաղմանց մէջտեղ՝ ալքոլամոլութեան նորագոյն սղաղիսդիքն ալ կ'ամփոփէ ու կը զրկէ եւ իր այս եռանդին համար կրկնապէս ու անկեղծապէս շնորհաւորելի է:

Ամբողջ ըմպելեաց և ոգելից ըմպելեաց քանի մը տարուան բաղդատական ծախուց ցանկը աւասիկ.

ամէն տեսակ ըմպելիք	ոգելից ըմպ. միայն
1904—1,498,622,715 օսլ.	1,277,727,190 օսլ.
1903—1,451,633,397 »	1,242,943,118 »
1902—1,369,098,276 »	1,172,565,235 »
1901—1,273,212,386 »	1,094,644,155 »
1900—1,228,674,925 »	1,059,563,787 »

Միացեալ Նահանգաց անցեալ տարի այս ապրանաց վրայ ստացած տուրքը եղած է 134,893,474 տօլար, այսինքն 2,26 տօլար կամ կէս օսմ. ոսկի, իւրաքանչիւր բնակչի համար:

Ամերիքեց Կոսթըր թերթը այս թուանշանները հրատարակելու առթիւ կ'ըսէ. — «Եթէ ոգելից ըմպելեաց վրայէն տուրքը վերնայ, ինչպէս նաև ոգելից ըմպելեաց հակառակ եւ զոյղ զգացումը եւ այդ կարգի ընկերութեանց ազդեցութիւնը պակսի կամ տկարանայ, այն ատեն այս ազգը այնպիսի անբարոյական վիճակի մը պիտի հասնի որ բուն իսկ անոր կեանքին սպառնայ»: Այս պերճախօս բառերուն վրայ իմ կողմանէս բան մը աւելցնելը անոնց զօրութիւնը տկարացնելու միայն պիտի ծառայէր:

Յ. Ս. ԹԱԼՇԱՆՃԵԱՆ

ՀԱՊԷՆԻՍՏԱՆԻ Մենելիք Կոյսեր կողմէ մայրաքաղաքս գտնուող Պատուիրակութեան անդամներէն զօրավար Աթօ Հաիլէ Միրիէմ փաշա երկուշաբթի օրը Ս. Պատրիարք Հօր այցելեց՝ ընկերակցութեամբ Ստեփան էֆ. Պօղոսեանի, եւ արժանաւոր պատուով ընդունուեցաւ Ն. Ամենապատուութեան ու Փոխաւոր Սրբազանին կողմէ Պատրիարքարանի դահլիճին մէջ: Աթօ փաշա գովեստով խօսեցաւ Հապէշիստանի մէջ առեւտրական գործով հաստատուած Հայերուն բարեմասնութեանց վրայ եւ Ս. Պատրիարքը հապէշ զօրավարին յանձնեց շնորհակալութեան օրհնալիւր Կոնդակ մը՝ Մենելիք Կոյսեր ուղղուած: Աթօ փաշա այցելեց նաև մայր եկեղեցի որու մասին սքանչացում յայտնեց:

ԷՋ ՄԸ ՊԱԼԱՏԱՔԻ ԿԵԱՆՔԷՆ

Երբ առաջին անգամ Պալատքին գիրք մը կարդացի, թէ և դեռ չէի կրնար զինքը հասկընալ իր բացարձակ կատարելութեան մէջ, անմիջապէս իր մէջ գտայ սակախ վարպետը որուն իւրաքանչիւր վանկին մտիկ պիտի ընէի ուշադրութեամբ, ջերմեռանդութեամբ, գորովանքով... Անկէց ի վեր տարիներ անցած են, բայց նոյն խանդավառութիւնը, նոյն ներքին, շատ մտերիմ և խորունկ զգացումը զոր իր գլուխ—գործոցները իմ մէջս արթնցուցած են, գրեթէ տարբեր մտաւորական ու է յուզումնքէ մը, նոյնը մնացած են որոնց մէջ կը խառնուի նաև ցաւը իրեն ժամանակակից չըլլալու...

Հիմակ որ կը թղթատեմ իր նամակները, «Անձանօթ կնոջ մը» ուղղուած, կը տեսնեմ մարդը՝ այնպէս ինչպէս ճանչցած էի իր հոծ գործերուն մէջէն, ինչպէս ընդհամարած էի իր յայտնած նախասիրութիւններուն մէջէն, իր տենչանքներով և իր ցաւերով, զորս պիտի կրնայի գծել առանց այդ նամակներուն ալ, իմ ներքին զգացումիս հետեւելով միայն:

Այդ նամակները վաւերական են սակայն, չօշափելի, անվիճելի, և ահաւասիկ անոնց մէջէն է որ պիտի ջանամ ներկայացնել հանձարեղ վարպետը իր ներքին կեանքին մէջ, իր ազնիւ և վեհանձն սրտին մէկ քանի բաբախումները փնտռելով ու նշանակելով: Պալատքի այդ նամակները ուղղուած են Տիկին Հանսքաին, ծնեալ կոմսուհի Էվլին Ռեզէվլուսքա որ այն ատեն 26 կամ 27 տարեկան էր և կը բնակէր Վօլինի մէջ. հետաքրքրուած և խանդավառուած Պալատքի գիրքերուն ընթերցումներէն, նամակ մը կը գրէ վարպետին «Օտարուհին» ստորագրուած. այդ նամակը Պալատքին ձեռքը կը հասնի 1832 փետրուար 28ին. Պալատք նախ քիչ մը ատեն չպատասխաներ, բայց յետոյ թղթակցութիւն մը կըսկսի, կանոնաւոր և երկայն, այդ Անձանօթ Տիկնոջ հետ որուն հետ կ'ամուսնանայ 18 տարի ետքը:

Այս թղթակցութեան պատմութիւնը գրե-

ուած է Ֆիկաուօի 1—6 յունուար 1894ի թիւերուն մէջ. իսկ նամակներուն հրատարակութիւնը կը գտնենք Ռեվիւ օր Բաուրի 4 փետրուար 1894 թիւին մէջ:

Այն ատեն Պալատք երեսուն երեք տարեկան էր, գրական աշխատութիւններու տակ ընկճուած, առանձնակեաց, իր երիտասարդ և սաք սրտին ձգտումները զսպելով, զրկուած՝ սիրուած կնոջ մը ներկայութենէն և գորովէն որուն փափաքը յաճախ կըզգանք իր նամակներուն մէջ: Յայտնի է թէ հեռաւոր և անձանօթ բարեկամուհիի մը նամակը զինքը խռովքով և միսթիքականութեամբ լեցուցած է.—

«Հեռուէն ձեռքս երկնցուցի ձեզի, առանց յաւանքութեան ինչպէս առանց պըշրանքի, բայց գրեթէ ստրկական վստահութեամբ մը, գիտակցութեամբ, և եթէ իմ նայուածքս տեսնէիք, հոն պիտի գտնէիք թէ՛ սիրահարի մը երախտագիտութիւնը և թէ՛ սրտին հաւատքները...»:

Լոյսի ճառագայթ մը եղած է հեռուէն եկած այդ համակրանքը իր մտաւորական տանջանքներուն մէջ. իր այն ատենուան գործերուն մէջ պիտի գտնենք այդ զուարթ նօթը, այդ ժպիտը զոր անձանօթ մը կը զրկէր իրեն հեռու երկիրներէն և ինք՝ վարպետի և սրտի մարդու բնազդական ճարտարութեամբ՝ կրցած է իրեն եղած շատ մը համակրանքի ցոյցերուն մէջ կառչիլ այս այնքան անորոշ, դեղեւուն, հեռաւոր հպմակրանքին որ փայփայանք մըն էր աւելի և որ կրցած է իրեն մոռցնել տալ շատ մը դառն ու մթին վայրկեաններ:

«Իմ մղած պայքարիս մէջ, իմ ծանր աշխատութիւններուս, իմ անվերջանալի ուսումնասիրութիւններուս մէջ այս ազմիլի Բարիզին մէջ ուր քաղաքակաւութիւնը և գրականութիւնը կը գրաւեն իմ տասնըվեց կամ տասնըութ ժամերս օրուան, ինծի պէս դժբաղդի մը համար որ այնքան տարբեր է ամենուն երեւակայած հեղինակէն, սքանչելի ժամեր ունեցայ զորս ձեզի պարտական եմ: Այսպէս, ձեզի յայտնելու համար իմ չորհրդակալիքս, ձեզի նուիրած էի չորրորդ հատորը «Scènes de la vie

privée»ին որ իր առաջին էջին վրայ ձեր անունը կը կրէր. այդ հատորը գրելու վրայ էի, երբ ձեր առաջին նամակը ստացայ:

Այդ Զօնը չպիտի գտնենք սակայն նշանակուած հատորին գլուխը. ուրիշ կին մը որ մեծ աղբեցութիւն ունէր Պալզաքի վրայ, ստիպած է որ ջնջէ օտարուհիին անունը. Պալզաք համակերպած է, բայց այդ հատորը արդէն ամբողջովին դրոյմը կը կրէ իր դորովանքին և այն տարօրինակ զգացումին զոր Տիկին Հանսքա ծնցուցած էր իր մէջ առաջին օրէն. —

«Երբ այս գիրքը կարդաք, պիտի ըսէք որ զայն վերջացուցի և սրբագրեցի ձեզի մտածելով. թերեւս գէշ բան մըն է ըրածս, բայց դիտաւորութիւններուս մաքրութիւնը ներելի կը դարձնէ»:

Այսպէս գրաւիչ և սիրուն պատմութիւն մըն է ծայրէ ծայր այդ նամակագրութեան պատմութիւնը, երբեմն յուզիչ՝ մեծ հեղինակին ներքին տառապանքներովը. կեանքով բարախուն էջ մըն է Պալզաքի կեանքին մէջ անփութօրէն ցուցադրուած հոն, առանց ընթերցողներու ամաչնող փոթը ունենալու որ կ'երեւի շատ աղգած է Պալզաքի գրեթէ կանացի հոգիին վրայ. իր նամակներուն մէջ յաճախ կը պնդէ թէ ինքը ուրիշ մարդ է քան ինչ որ իր ընթերցողները երեւակայած են և այդ չճանչցուած ըլլալու գիտակցութեան մէջ ցաւ կայ, ճշմարիտ և բարախուն ցաւը անտեսուած մարդուն:

«Բայց եթէ զիս ճանչցած ըլլայիք անձնականապէս, եթէ իմ քաջութիւնը, ուսումնասիրութեանց, զրկանքներու և աշխատութեան օրերս ձեզի պատմուած ըլլային, ձեր ամբաստանութիւններուն շատերը պիտի մոռնայիք և մէկէ աւելի տարբերութիւն պիտի գտնէիք մարդուն և իր գործուածքներուն մէջ: Անտարակոյս, գիրքեր կան ուր ես մնալ կ'ուզեմ, բայց անոնք դիւրաւ պիտի գուշակէք, որովհետեւ անոնց մէջ սիրտը խօսած է. իմ ճակատագիրս է նկարագրել ուրիշներուն զգացած երջանկութիւնը և զայն կատարեալ փափաքիլ՝ առանց անոր հանդիպելու: Անոնք միայն քր. կը

տառապին, կրնան ուրախութիւնը նկարագրել, որովհետեւ մարդ աւելի լաւ կը բացատրէ ինչ որ կ'ըմբռնէ քան ինչ որ կըզգայ»:

Հետզհետէ Պալզաքի հոգին անձկագին հանգամանք մը կ'առնէ. իր անձառագայթ և զրկանքներով լեցուն կեանքը՝ բաժնուած հոգեկան տառապանքներու և գրական սարսափելի աշխատութեան մը տակ (օրը 16 կամ 18 ժամ) այդ մեծ մարդը, գորովանքի կարօտ այդ վեհանձն ու բարի մարդը որ գրական հրաշակերտներով՝ կ'արբեցնէր զինքը կարգացողները, մինակը կըզգայ ինքզինքը, իր վսեմ հոգիին մէջ առանձնացած, և հարկ կ'ըլլայ որ կին մը հեռուէն, մղոններով հեռուէն իր շնորհալի և փայլալիչ խօսքերով անոր տագնապները ամօքէ. —

«Եւ այս պարագաներուն մէջ երբ մարդ 30 տարեկան է և դեռ կեանքը չէ վայելած, կ'երեւակայէք ի՞նչ հրաշքով կ'ընդունի բարեկամական բառ մը, գորովալից խօսք մը»: Ուրիշ տեղ մը. — «Ձեզի չէ՞ որ կը պարտիմ այն քաջալերութիւններէն մէկը որ մեզի ընդունել կուտան մեր ծանր աշխատութիւնները. կաթիլ մը ջուր անապատին մէջ»:

Բայց այդ նամակներուն մէջ ամենէն յուզիչը և շահեկանը՝ գրագէտին գանգատի ձայնն է. —

«Շատ ուժգնօրէն դժուրեցայ թէ՛ ընկճող աշխատութիւններէ և թէ՛ սաստիկ վիշտերէ. պէտք է լռել թէ՛ աշխատութիւնները և թէ՛ ցաւերը: Ես և Աստուած միայն կրնանք գիտնալ թէ ի՞նչ ահելի կորով պէտք էր սրտի մը համար որպէս զի կարենար կրել զսպուած արցունքները և գրական աշխատութիւնները. հոգիդ մեղամաղձոտութեան մէջ՝ հարկ է որ դեռ զայն զբաղեցնես մտացածին երջանկութիւններով և դժբաղդութիւններով. ցուրտ տառամներ գրել և ծածկել տաւմ մը որ սիրտդ և հոգիդ կ'այրէ... Բայց պէտք է թողուլ ասոնք:

«Մինակ եմ, հիմա փակուած եմ երկայնատենուան համար տունիս մէջ, թերեւս տարուան մը համար. արդէն այս կամովին առանձնացումները կրած եմ յաճախ յանուն գիտութեան և աղքատութեան...»:

Հետզհետէ իր սիրտը աւելի արիւնոտ, վշտահար մարդը երեւան կ'ելլէ. իր մէկ գիրքին համար կը գրէ. —

«Հատուած մը կայ որ կը յայտնէ թէ ինչ տրամադրութիւններու մէջ էի այդ գիրքը գրած ատենս. վիրաւոր սիրեցումն, մութը եւ լուսիւնը. — պէտք է տառապած ըլլալ հասկնալու համար այս տողը իր բոլոր արժեքին մէջ եւ պէտք է ինծի չափ տառապած ըլլալ՝ զայն ծնելու համար սուգի օրուան մը մէջ» :

Հետզհետէ ուժգին հոգեկան տառապանքներուն կը յաջորդէ յուսահատութիւնը, տեսակ մը անորոշ եւ արդէն համակերպող արտութիւն :

«Բանի որ իմ բոլոր իղձերս եւ հաւատքներս պարապը ելան, քանի որ երազներս կը ցրուին, հարկ էր որ ինքզինքիս փափաք մը ստեղծէի, եւ արուեստը ընդգրկեցի. իմ ուսումնասիրութիւններուս մէջ կ'ապրիմ... իմ աշխատութիւնով բռնաւորուած երիտասարդութիւնս, իմ երկայն տընութիւններս չպիտի ունենան այն միակ չարիքը զոր կը փափաքէի : Այն օրէն որ գիտցայ թէ ի՞նչ էր մաքուր շունչ մը, մաքուր շրթունքներէ ելած, միշտ բաղձացի երիտասարդ եւ սիրուն կնոջ մը բարեկամութիւնը, բայց ի զո՛ւր... : Բանի մը տարիէն երիտասարդութիւնս յիշատակ մը պիտի ըլլայ. եւ այդ յիշատակս ուրախութիւն չպիտի բերէ ինծի. այն ատեն ինչպէ՞ս յուսալ քառասուն տարեկանին բան մը զոր քսան տարեկանիդ չյաջողեցար ունենալ...» :

Յաւաքին տրտունջ մըն է այսպէս ի զուր անցած երիտասարդութեան մը եւ ինք իր մէջ այրող սրտի մը : Ինչպէ՞ս կ'ըլլայ որ Պալզաք այնքան հաւնուած իր ժամանակակիցներէն եւ մանաւանդ կիներէն, քոյր սիրտ մը չգտաւ իրեն. պէ՛տք է վերագրել ասիկա իր գերադասց մարդու գծուարահածութեանը թէ բուն իսկ զինքը գրականապէս գնահատողներուն անհասկցողութեանը. կին մը իր սրտին մէջ չկարդաց, իր մեծ, ազնիւ եւ հըրայրքով բարախուն սրտին մէջ, եւ կամ թէ անոնք որ զինքը հասկցան եւ փափաքեցան իր հանճարեղ ճակատին վրայ բաղձացուած

փայփայանքը բերել, չհամարձակեցան երեւան գալ եւ մութին մէջ մնացին. թերեւս նոյն իսկ եթէ Տիկին Հանսքա հեռու չըլլար իրմէ եւ օտարական, չհամարձակէր իր այնքան կանացի եւ գողտր սիրտը յայտնելու վարպետին՝ շատ մը բնական նկատողութիւններով զոր բոլոր կիները պիտի հասկնան. ինչ որ ալ ըլլայ սակայն, ողբագին՝ գրեթէ եղբրական բան մը կայ Պալզաքի տառապանքին մէջ, մեծ մարդու անհրաժեշտ եւ դժնդակ առանձնացումը :

«Այնքան ցաւով արմատախիլ կ'ընեմ սրտիս մէջ իմ յոյսերս. պէտք է կանեփի պէս մի առ մի, չիւղ առ չիւղ խելը դանոնք» : Եւ այն տոնն մենք, ուշ մնացողներս, ինչպէ՞ս երախտապարտութիւն չզգանք այդ բարի կնոջ համար որուն սիրուէթը կուգար կ'անցնէր Պալզաքի աշխատութեան երկայն ժամերուն մէջէն եւ իրեն պատրանքը կուտար մինակ չ'ըլլալու :

«Այն նամակը թերեւս ամիս մը ճամբան պիտի ըլլայ, զայն ձեր ձեռքերուն մէջ պիտի բռնէք եւ թերեւս բնաւ զձեզ չպիտի տեսնեմ. ձեզ որ պատրանքի մը պէս կը պահեմ սրտիս մէջ, որ յոյսի մը պէս ամէն երազանքներուս մէջ էք եւ որ այնքան չնորհալիօրէն մարմին տուիք իմ երազներուս : Զէք գիտեմ թէ ի՞նչ է բանաստեղծի առանձնութեանը մէջ մտնալ անուշ դէմքով մը, որուն ձեւը գրաւիչ է նոյն իսկ այն տարտամութեամբը որ անսահմանելի կուտայ... : Եթէ գիտնայիք թէ ինչ թափով մենակեաց հոգի մը ամենէն մոռցուած, կը սուրայ դէպի ճշմարիտ բարեկամութիւն մը... : Եթէ ինծի կարելի ըլլար ձեզի ըսել երազներս, երազներ որ գիտեմ թէ անկարելի են՝ բայց այնքան հաճելի... բայց չնո՛ր՝ ըրէք, յանուն այն անօրինակ զգացումին զոր չեմ ուզեր որակել, ըսէ՛ք, ըսէ՛ք թէ ինձմէ զատ ուրիշ մը կը գրէ՞ք Ֆրանսայի մէջ» :

Հետզհետէ այս թղթակցութիւնը հոգեկան եղական վիճակ մը առաջ պիտի բերէր Պալզաքի մէջ որ պատրաստուած էր անոր, թէ՛ իր հանճարեղ մարդու ուժեղ խառնուածքով եւ թէ՛ այն մեկուսացումով որուն

մէջ կ'ապրէր և որքան ալ անբացատրելի մեղի, յայտնի ճշմարտութիւնն էր սակայն, Ռայց այլեւս չպիտի ծանրանամ Պալզաքի ներքին կեանքին մէջ այնքան կշիռ ունեցող այս զգացումին վրայ զոր ինքն իսկ չկրնար որակել և որ ապագային այնքան որոշ և վճռական հանգամանք մը պիտի առնէր:

Անկախօրէն այդ ներքին զգացումէն, Օտարուհին մեծ ազդեցութիւն ունեցած ըլլալու է Պալզաքի վրայ և անկէ ետքի գրական գործերը ապահովապէս այդ համակրելի կնոջ ազդեցութեան կնիքը կը կրեն. «Վ գիտէ Պալզաքի ո՞ր սքանչելի կին—տիպարին մէջ պէտք է փնտռել զայն և կամ նոյն իսկ թերեւս զայն պիտի գտնենք իր նկարագրած բոլոր կիներուն մէջ. «Չեմ ուզեր որ զիրքը ինքնին ձեզի անտարբեր թողու, իւրաքանչիւր էջին մէջ՝ ձեզի համար մտածում մը կայ, փայփայանք մը»:

Այդ նամակները իրենց սքանչելի քաղցրութենէն դուրս՝ առանձին շահեկանութիւն մը ունին սա տեսակէտով որ հոն Գրագէտը կը տեսնենք իր մտերիմ կեանքին մէջ, գրական հոգեբուն և խոնջէնքներուն մէջ, ինչպէս մարդը, իր հոգիին մերկութեան և անսեթեւեթ պարզութեամբը:

Պալզաք միշտ ամբաստանուած է թէ լաւ գրող մը չէր, թէ գրել չէր գիտեր. կ'երեւի թէ ասիկա իր մեծ վիշտերէն և հոգերէն մէկն էր:

«Ոճի պակասութիւններ նյութարեցի La peau de chagrinին մէջ, որոնք զայն կ'աւրեն. սկսայ սրբագրել, բայց երկու ամիս աշխատելէ ետքը, կրկին տպագրութեան մէջ դեռ հարիւրի չափ սխալ գտայ...: Ամէն կողմէ ինծի կը պօռան թէ գրել չեմ գիտեր և ասիկա անգութ բան է, քանի որ ես ինքզինքիս ըսած եմ նոյն բանը. ցերեկներս կը յատկացնեմ հեղինակելու և գիշերները սրբագրելու նախօրդ գրածներս...: Այս օրերս այն մեծ վիշտերէն մէկը ունեցայ զոր մինակ արուեստագէտները կը ճանչնան. երեք ամսուան աշխատութենէ ետքը Լուի Լամպերը կրկին գրեցի. երէկ հաւատարիմ բարեկամ մը, այն մարդերէն որ չեն խաբեր, նշդրակը

ձեռքը եկաւ եւ միասին քննեցինք իմ գործս: Անիկա տրամաբանող, խիստ քերական մըն է եւ հաղար սխալ գտաւ... գիշերը մինակս լացի յունահատութենէս եւ կատաղութենէս...»: Ուրիշ տեղ մը, իր նոր գրելիք մէկ գիրքին վրայ խանդավառութեամբ խօսեցէ ետքը կ'ըսէ—«Հիմա հեղինակութեան տաք նապին մէջ եմ, ամէն բան աղէկ կը թուի ինծի. երբ լմնայ, այն ատեն պիտի գայ յունահատութիւնը մարդու մը որ մինակ սխալները կը տեսնէ»:

Այսպէս անհունօրէն կարելի է հրկարել չարքը հեղինակի տանջանքներուն, կասկածներուն, վարանումներուն որոնց մէջէն Պալզաք՝ տառապանքով գաղափարային դարձած հոգի՝ մէջտեղ կուգայ իր բոլոր սքանչելի համեստութիւններով, իր բոլոր գերագոյն յատկութիւններով, երբեմն միամիտ և անուշ պատանիի մը պէս, երբեմն գիտակից իր հշօր միտքին և անթերի նկարագրին: «Ժամանակ չունեցայ ո՛չ չարիք ընելու և ո՛չ ալ երջանկութեան երթալու. ծայրայեղ դիւրագգածութեամբ մը օժտուած, յաճախ առանձնութեան դատապարտուած, իմ կեանքիս շարունակական դժբաղդութիւնը տաղանդս էր... զիտողութեան մեծ կարողութիւն մը ընէի և երբ ընկերութեան բարձր դասակարգներուն մէջ կը գտնուէի, կը տանջուէի հոգիիս բոլոր ուժովը. մինակ, չճանչցուած հոգիները և աղքատները դիտել գիտեն, որովհետեւ ամէն բան գիրենք կը վիրաւորէ և զիտողութիւնը ցաւէ առաջ կուգայ...»:

Եւ վերջապէս սա խորունկ, սքանչելի ու ճշմարիտ ցաւէ ներշնչուած տողը. «Իր մտածումները հրատարակել, զանոնք ծախել չէ՛: Եւ եթէ ես հարուստ և երջանիկ ըլլայի, բուրն ալ պիտի պահէի իմ սիրելիիս»: Յետոյ, յաւիտենական դանգատը գերազանց մարդուն՝ միջակութիւններու և ճշմիմ նենգութիւններու դէմ որոնք այս անգամ Պալզաքի շրթունքներուն ծայրը կուգան. բոլորովին նոր շեշտով մը:

«Բարիդի բոլոր արուեստագէտները և գրագէտները ճանչցած եմ և տասը տարի է

որ չատ մը բաներ սորվեցայ, այնքա՛ն տխուր բաներ որ աշխարհիս համար ձանձրոյթը հոգիս գըրաւեց. (այդ մարդերը հասկնալի ըրին ինծի Ռուսոն.) ինծի չեն ներեր. զիրենք ճանչցած ըլլալս. ինծի չեն ներեր ոչ իմ հիւսոյումս ոչ անկեղծութիւնս. ի՛նչ ցեխ բուր ասոնք»:

Բոլոր անոնք որ իր սրտին դպած էին և անոր տուած էին ցաւի այն գերագոյն թըր-թըռացումները որոնց արձագանգը կ'երկարածագուի իր հոյակապ գործին առաջին էջէն մինչև վերջինը, բոլոր անոնք որ երես դար-ձուցած էին մեծ գրագէտին և զինքը առանձնութեան դատապարտած և բոլոր անոնք որ իրեն մօտ ըլլալով աւելի մեծ ոճիրը գործած էին՝ զինքը չհասկնալու, հիմակ մոռացութեան գորշութեան մէջ աւելի քիչ բան քան փոշիի հատիկ, այսօր մեզի տխուր հաճոյքը կը պատճառեն սակայն, առիթ ըլլալով բոլոր այդ անանունները, միջակները, որպէս զի Պալզաքի կեանքին մէջ ձգած ցաւագին հետքերնին տեսանք և լսենք հանճարեղ մարդուն ցաւի աղաղակը, իր հոգիին աղաղակը որ միշտ պիտի թրթռայ:

Տխուր միտթարութիւն մը սակայն բոլոր այն մեծ գրագէտներուն համար որ աւելի պիտի ընտրէին իրենց սիրելիներուն ականջին մըմնջել իրենց հոգիին բոլոր բանաստեղծութիւնը և որոնց կեանքը Պալզաքի պէս հագիւ թէ լուսաւորուած է հեռաւոր և անմատչելի ցոլքով մը, ինչպէս կը կոչէր ինքը Տիկին Հանսքան:

ԶԱՊԷՂ ԵՍԱՅԵԱՆ

ԵՐՈՒՍՍԱՂԵՄԻ Վանքին նախորդ ելեւմըտից Տեսուչ Տ. Դեւոնդ վարդապետ Մաքսուտեան չորեքշաբթի օրը Պէրութէն մայրաքաղաքս հասաւ Մէսածըրի Սաղաթէն շոգենաւով: Երուսաղեմի Պատր. Փոխանորդ Տ. Դէորդ եպիսկ. Երէցեան շոգենաւ երթալով զիմաւորեց Տ. Դեւոնդ Վրդ.ը և առաջնորդեց Երուսաղեմատուն ուր հիւրընկալուած է:

ԱՅԿՈՒՆԷ

— — —

Թուխը և կամ կապոյտը, սիրունը, անձկալիք Բիւր բիւր աչք տեսին զեւս արշալուսոյն. Ի խորս արդ չիրմաց նընջեն խաղաղիկ, Այլ սակայն ծագէ դեռ ակն արեւուն:

Դիչերք ցանկալիք քան ըղտիւս, հեշտանս Արբուցին բիւրուց աչաց նայելեաց. Զահք ցայգոյ փայլեն յանկէտ յաւիտեանս, Այլ աչերն այն կան արդ խաւարամած:

Զիւրդ, ո՛հ, զիւրեանց կորուսին ըլլոյս. Ո՛չ, ոչ, այդ նոցա ո՛չ է հնարաւոր, Նոքա պընջուն արդ յայլ ուրեմըն կոյս, Յայն՝ զոր մեք Անտես կոչել եմք սովոր:

Եւ հանգոյն արբից՝ որք մեկնին ի բաց Այլ յոլորտս երկնից անդ կան և մընան, Սոյնպէս արեւմուտք իցեն և բըբաց, Այլ ոչ ճըլմարաիւ չիջանին սակայն:

Թուխը և կամ կապոյտը, անձկալիք, սիրունը, Բացեալք առ անհուն լոյս գերարբինի, Որ աստէն առ մեօք փակեցան աչկունք՝ Դեռ տեսանեն յա՛յնկոյս գերեղմանի:

ՍԻՒԼԼԻ ԲՈՒԻՏՈՄ

Թարգմ. Ի գալլիսկանէ
ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ պիտի հրատարակենք, ուրիշ գրական յօդուածներու հետ, երկու ինքնատիպ ու շահեկան գրուածքներ՝

Աբեղաձագն յԱրմաւ
ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԷ

և

Դեղի նամակներ
ԹԼԿԱՏԻՆՅԻԷ



ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ... ՇՈՒԿԱՆ

ԻԶՄԻՐ, 9 Մայիս

Սիրելի խմբագիր Մասիս

Յօդուածի տեղ նամակ մը քեզի:

C'est un lapin que je vous pose, եւ աւոր համար երեսդ կը կախես, կը պոստես յօնքերդ, ահագին փափաք մը ունիս հայհոյելու եւ եթէ ձեքէդ գար՝ պիտի խզէիր բարեկամութիւնը որ զմեզ իրարու կը կապէ այնքան տարիներէ ի վեր:

Մի՛ աճապարեր սակայն, ցասկոտ բարեկամս, համբերութիւնը՝ ունեցիր նամակս մինչև ծայրը կարդալու եւ երբ աւարտես, գրաւ կը դնեմ որ պիտի ներես ինծի եւ ասկէ աւելի, պիտի մեղքնաս:

Ամիս մը կայ գրելթէ, որ տասն անգամ նստայ շարժական յօդուածս գրելու Մասիսին համար եւ ամէն անգամ տասը թուղթ մրտեցի, տուղիններով սիկառէթ սպառեցի առանց երկու տող իրարու քով կարենալ բերելու:

Դրականօքն խօսելով, en état de faillite չեմ տակաւին, բայց կը վախնամ որ ստիպուած պիտի ըլլամ de cesser mes paiements, մեծ moratoriumը հռչակելէս առաջ:

Բանի որ մենք մեզի կը խօսինք կոր, թող տուր որ պզտիկ խոստովանութիւն մը ընեմ քեզի:

Առողջութիւնս անզն է, ախորժակս ալ նոյնպէս, որ եւ է հոգ չունիմ—գէթ առ այժմ—միտքս որ եւ է մասնաւոր բանով մը զբաղած չէ, մանաւանդ այս միջոցիս սիրտս ալ ազատ է՝ անհունութեան մէջ թռչտող թռչունի մը պէս: Հակառակ սակայն այս ամենուն, je suis bon à rien, թուլութիւն մը կայ վրաս, ուղեղս չի բանիր եւ անկարող կըղգամ ես զիս՝ որ եւ է բան մը յղանալու, արտադրելու, գրելու:

Ահագին փափաք մը ունիմ գրական դպրոցէն խոյս տալու et de faire l'école buissonnière...

Դառերը կը կանանչան, ծաղիկները կը բուսնին, երկինք աղուոր է եւ օդը զմայլելի. մթնոլորտին մէջ վարդի, ելակի հոտ կայ, թռչունները գիրար կը հալածեն... avec des idées folichonnes... Թարմութիւն, կեանք, ժպիտ՝ ամէն դէմքերու վրայ, իրերը եւ մարդիկ գարունը կը տօնեն, ես ընդհակառակը գրասեղանիս առջեւ կը թմրիմ, զգացումներս կը չէղոքանան, երեւակայութիւնս կը չորնայ, եւ գլուխս չի գործեր:

Պատճառը: Եկո՛ւր միասին փնտռենք:

Գուցէ կարծես թէ սիրահարած ըլլամ, այս fainéant վիճակէս դատելով զիս:

Մտքէդ անգամ մի՛ անցունել, սիրելիս: Précisément, ce n'est pas le cas.

Սիրոյ անտանելի դպրոցէն չըջանաւարտ ըլլալէս ի վեր, սկզբունք մը ընտրեցի ես ինծի, զոր իրրեւ դեղագիր կրնամ բարեկամներուս ալ տալ:

Ապրիլ՝ սիրային յիշատակներով եւ սիրային յոյսերով միայն: Ասկէ ուրիշ ճամբայ չի կայ՝ երկար, առողջ եւ հանգիստ ապրելու:

Oui l'amour c'est une souffrance,
Il promet tout sans rien tenir,
Il n'est doux que dans l'espérance,
Et bon que dans le souvenir

Ուստի այս ծուլութեանս մէջ սէրը գործ չունի: Անգամ մը որ ասիկայ ըսի, ուրիշ տեղ փնտռենք, կ'ուզե՞ս: պատճառը քեզի յօդուած չի կրնալ զրկելուս:

Սա չաբբն տեսա՞ր, ա՛խ...:

Հիմայ կը հասկնամ որ ինչո՞ւ Թօգատեան Մարտիրոս ազան կեանքին մէջ նորավէպ մը չէ գրած եւ Իփրանոսեան եղբայրները երբեք չպիտի կրնան չորս տող ոտանաւոր յօրինել:

Դրագէտ մը՝ դրագէտ ըլլալէ կը դադրի չաբբն, ինչպէս cocotte ըլլալէ պիտի դադրէր Ռենէ Տըպրիվ՝ եթէ իր alcôve-ի փոխադրէր Դարակէօմբիւկի եկեղեցին քովի փողոցը:

Շուկան՝ գերեզմանատունն է գրագէտին թուիքներուն :

Օհ, տափակ, գռեհիկ կեանքը հոն տեղի : Օրն ի բուն, բիացան, խանքաւը, եմ-
տազէն, պալեան, փոքրաման, փոխցան,
վերեսիյն, միւսքերին, առաւ—փախաւը,
տեկը, Մոս ընկերութիւնը, միջնորդը, խան-
վեմին, համալը, խաքրեմին, բոսքան, բո-
քսոն, Լիւրբուլ, Ատանա, Քըրքաղաճ,
Պօրսան, քելակրան, պիլանցուն եւ բոլոր շու-
տիկ բաները որոնցմով գրամ կը վաստկին
մարդիկ :

Եւ քրոնիկագիր մը դիր այս միջավայրին
մէջ :

Եւ կը պահանջեւ, սիրելիդ իմ Տիգրան,
որ Շուկային օդով թոքերս լեցնելէ ետքը
նստիմ եւ սիրուն բան մը գրեմ Մասիսին :

Շատ պահանջկոտ չեմ :

Հոգեկան վիճակս չեմ ուզեր կոր հա-
կընալ :

Շուկան քիթիբիոսցուց զիս, լմնցաւ :

Առաջ՝ գրիչս ձեռք առած միջոցիս, կը
գոցէի աչքերս եւ ես զիս կը գտնէի աշ-
խարհի մը մէջ ուր մարդիկ բարի կ'ըլլային,
պարկեշտ եւ անկեղծ. չէի ներքեր կրնարուն
որ նոյն իսկ շապիկով մը ներկայանային
ինձի. այն անձերը որոնց հետ յարաբերու-
թեան մէջ մտնել կ'ուզէի, դուքսեր, մար-
քիզներ, տաղանդաւոր արուեստագէտներ,
չնորձալի երիտասարդներ, մանկամարդ աղ-
ջիկներ, troublant գեղեցկութիւնով կիներ
կ'ըլլային բոլոր : Հիմայ աչքերս կը գոցեմ
եւ ուր որ դառնամ նորէն մեր խանին ֆօօճն
կը գտնեմ ես զիս :

Քրոնիկագիր ըսելով մ'անցնիր մ'երթար,
մտերիմս :

Տարբեր էակ մըն է այն ծնունդովը, կո-
չումովը, մտածելու եղանակովը, ապրելա-
կերպովը :

Ի՞նչ է քրոնիկագիրն գործը :

Դիտել՝ ինչ որ ուրիշներուն աչքին ան-
գամ չի զարներ, ուսումնասիրել՝ ուրիշնե-
րուն կարեւորութիւն չի տուած դէպքերն
անգամ, բացատրել՝ ինչ որ ուրիշները կը
վարանին ըսելու, ճարտասափել հոն՝ ուր ու-

րիշները կը պապանձին, առնել իրողութիւն-
ները այնպէս՝ ինչպէս որ պէտք էր որ ըլ-
լային եւ ոչ թէ ինչպէս որ են, վեր հանել
ամէն ինչ որ պաճաւ—պաճներուն ուշադրու-
թիւնը չի գրաւեր, բարոյական մը հանել
ամենէն անբարոյական կարծուած բաներէն,
չինել ինչ որ ուրիշները կ'աւրեն, բարձրաց-
նել անտեսուած գեղեցկութիւնները, չարա-
չար հարուածել մարդոց սին, աղտոտ ունա-
կութիւնները, աղուորին, ճշմարտին ճաշակը
քսել անտարբերներու շրթունքին եւ կեանքը
սիրուն, տանելի եւ հաճելի ներկայացնել
ամէն անոնց որ կ'ապրին առանց իտէալի,
առանց գիտնալու թէ ի՞նչու :

Քրոնիկագիրը այս ամէնը կ'ընէ sans en
avoir l'air, առանց մեծ հովեր առնելու,
առանց յաւակնոտութեան, առանց աղմուկի :

Եւ ասոր փոխաբէն, այդ bon enfant
գրողը չի պահանջեր որ սուրբերուն դասը
տեղաւորեն զինքը, պսակներ հիւսեն ճակ-
տին, Ակադեմական ընեն զինքը ի Ֆրանսա
եւ կամ Ուսումնական Խորհրդոյ անդամ ի
Պոլիս : Քրոնիկագիրը մահարձանի մը արժանի
չի դտներ ինքզինքը եւ չունի յետ մահու
ակնկալութիւններ այն դիւրահոս, անսե-
թեւեթ, պարզ տողերուն համար զորս իրա-
րու տակ չարած է առանց վրայէն անդամ
անցնելու, երկու գաւաթ մալակախի միջեւ,
երկու աչքի աւալթիս, այնքան միջոցի մէջ
որքան կը տեւէ սիկառէթ մը, օրուան ամէն
ժամերուն, երբ անկողին կը մտնէ, կերակուր
կերած պահուն, սրճարանին մէկ անկիւնը,
քալած միջոցին, հոս հոն, ամենուրեք :

Քրոնիկագիրը յաւիտենականութեան աչք
չունի : Օր մը միայն կ'ապրի անիկայ, գրածը
չաբաթ մը միայն կը դիմանայ, և իր ժամա-
նակակիցներուն կէս օգտակար, կէս հաճելի
ըլլալէ ուրիշ փափաք չունի. ասոր հետ սա-
կայն, քսան տողնոց քրոնիկներ կան որոնք
յիսուն տարուան Աւետարեւի collectionին
հետ չեմ փոխեր :

Այսօր միտքերը, զգացումները եւ բար-
քերը այնքան բարակցած, նրբացած, յղ-
կուած են որ բարոյականի դաս մը առնելու
համար մարդս պէտք չունի Տէքարթի, Բատ-

քալի, . . . Հորոյի եւ ասոնց նմաններուն խո-
շոր խոշոր գրքերը թղթատելու եւ երկու
երեսի միջեւ մրափելու :

Հ. Հարուէնի տասնըօրս տողնոց մէկ
proposին մէջ խտացած աւելի մեծ դասեր
կան սորվելիք քան Բարդէն վարդապետի
քարոզներու հատորին մէջ :

Ընթերցողները շատ զգայուն են հիմա —
անշուշտ կը հասկնաս թէ ամէնուն համար
չէ խօսքս — եւ երբ բան մը կը գրենք այսօր,
մենք կ'ենթադրենք թէ ան մեր ուղածներն
են որ կը կարդան կոր զմեզ, անոնք՝ որ լեպ
չըսած լեպլեպին կը հասկնան արդէն :

Իրոնիկագիրը ի պէս զարգացելոց կը
գրէ եւ միմիայն ասոնց հետ գործ ունենալ
կը փափաքի, հոգ չէ թէ միւսները բերանին
բանան եւ փոխեն իրենց նախանձի եւ հաստ-
գլուխութեան բոլոր մաղձը :

Աչքի առջեւ ունենալով բազմազան հան-
գամանքները որոնք քրօնիկագիրն անհրա-
ժեշտ են իր ճամբէն ընթանալու համար,
հանգամանքներ որոնց վրայ հաղիւ կրցայ
հարեւանցի ալինարկ մը նետել, դուն ալ հա-
մոզուեցար որ ինձմէ շատ բան սպասելու
չես որքան ատեն որ դատապարտուած եմ
Պէդէստէնին պատկից խանի մը անկիւնը ան-
ցընելու օրուանս մեծագոյն մասը :

Շատ բաներ կրնայի ըսել, բայց հատով
մը գոհանամ :

Ինչպէ՞ս կուզես որ առաջուան պէս կա-
րենամ գրել, երբ բոլորովին փոխուած ըլ-
լալս ամենէն առաջ ես կըզգամ :

Ձէի կրնար երեւակայել որ այսքան վա-
րերը կրնամ իջնալ ես ալ, ես ինքզինքէս
քաննեցայ, տե՛ս իրաւունք ունի՞մ :

Երէկ տեսնելու էիր զիս :

Ժամը հինգին միջոցներուն, երբ ա'լ
գործերը կը դադրին, աթոռ մը կ'առնեմ
եւ դիմացի պատին տակ կը նստիմ, չուքին :

Օդը տաք է, քրտնած եմ եւ, ափսոս,ս,
թաշկինակս սըխը սըխը խօթած եմ օձիքիս
եւ վզիս միջեւ, լաթեհագններուն յետինին
պէս :

Դրեթէ միւսնոյն վիճակի մէջ՝ դրացիս,
30,000նոց վաճառական մը, աթոռը կ'առնէ
եւ կուգայ քովիկս :

Այդ միջոցին մարուլ ծախող Հրեայ մը
կ'անցնի մեր առջեւէն :

— Մարուլ մը ուտե՞նք, կը հարցնէ բա-
րեկամս :

— Ձեմ գիտեր :

— Ձէ, պաղ պաղ կուտուի :

— Կը կարծէ՞ք :

— Հիմայ կը տեսնաս : Սինեօ՛ր, քաջա՞
վէրիօրսուն :

— Թանէսի պիր մէթալիք :

— Ամատա ետիտըն, օն փարաեա վէրի-
օրլար :

Կուտաս — չես իտար. քառորդ մը բանա-
կուիւէ ետքը 3 հատը 3 մէթալիքի սակար-
կութիւնը կը վերջանայ :

Այդ պանծալի գործը լմնցնելէ ետքը 1¹/₂
մէթալիքը կը վճարեմ եւ դրացիիս հետ դէմ
դէմի անցնելով էջերու պէս կըսկսենք ուտել :

Եւ կիրիտ խանին fкоксн, փողոցը, à man-
che de chemise, մարուլ ուտող մարդէ մը
կըսպասես որ սիրուն քրոնիկ մը զրկէ քեզի :

Այն ատենները անցան, ինձի համար,
ուր իրիկունները ծարաւնիս յագեցնելու հա-
մար, chalumauով օշարակներ կը խմէինք,
մէջը քանի մը կաթիլ maraschino աւելցը-
նելով :

Հիմայ որ մարուլի ինկանք, այդ ամէնը
մոռցիր :

Բայց մարդու բան մի՛ ըսեր : Դեռ այս
կեանքին մէջ նոր եմ, թերեւ կը շտկուիմ :
Մի՛ յուսատիր :

Թէեւ նոր, բայց բան մը սորվեցայ, թող
տուր որ քեզի ալ սորվեցնեմ :

Դիտե՛ս ինչ տարբերութիւն կայ Շուկային
և Լրագրութեան միջեւ :

Չարչըն մէկ սուտ կը զրուցես եւ կրնաս
տասը ոսկի վաստկիլ :

— Վալլահա չիմտի 290ա վէրտիմ :

Մինչդեռ լրագրութեան մէջ՝ տարին տաս-
ներկու ամիս սուտ կը զրուցենք եւ բան
մը վաստկած չուենք :

Հիմակ կը կարծես թէ չուկան ապրելուս
համար կեսարացիի պէս փարայի խօսք կ'ընեմ
կոր քեզի :

Détrompez-vous, mon vieux . . . :

Մտքէս չանցնիր որ օրին մէկը շուկայէն դրամ պիտի չահիմ. բայց հիմնովին համոզուած եմ որ շատ մեծ կորուստ մը ընելէս ետքը, կարեւոր բան մըն ալ վրայ պիտի տամ:

Մինչև այսօր, բարեկամ, երբ սալօնէ մը ներս կը մտնէի՝ շուկ մըն էր կը փրթէր.

— Բրիզանթէմը կուգայ կոր:

Վաղը, միւս օր, եթէ ասանկ երթայ, գիտե՞ս ի՞նչ պիտի ըսեն.

— Արթին աղան եկաւ:

Յուզարկաւորութեանս օրը պիտի ըլլայ ատիկայ:

Քոյդ

ԲՐԻԶԱՆԹԷՄ

ԳՐԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ(*)

Գ. ԶՕՂՐԱՊ

Վերադարձի գիշերն է... «Դետինը կակուղ է փետուրներով չինուած բարձի մը պէս... հոս հոն՝ ծերացած ինկած ծառերու բուններ. ոմանք տարիներու բեռան տակ ընկածուած և ոմանք իրենց առուգութեանը մէջ օր մը կայծակէն զարնուած... Մութ է չորսդինիս. հակայ ծառերուն շուքը վերահաս գիշերին սեւութեամբը կը թանձրանայ...»:

Ինչ ատենէն սակայն պայծառութիւն մը կը ժայթքէ, և դեղնորակ ճամբաներուն վրայ կը ցանէ հեշտանուաղ լազուարթի երանգներ. և մենք յափշտակուած կը սպասենք անոր՝ որ իր գորովալիր ծաղիկներուն աղնուական բոյրը պիտի բերէր մեզի. այս սպասումը կ'երկարի սակայն. ան չի՛ գար ու մեր երազները քիչ քիչ կը ձանձրանան. լըռութիւնը ա՛լ տաժանելի կը դառնայ. ու մենք կը սկսինք խօսիլ իր բզրումնաւէտ

(*) Կարգ մը թիւրիմացութիւններ ուղեկու և ուրիշներու ալ տեղի չտալու համար, պէտք կըղգամ յայտարարելու թէ այս «Դէմքեր»ը կենդանագրած եմ լոկ բանաստեղծական տեսակէտով:

ծաղիկներուն տարալիարհիկ հմայքին, իր եղրեւանիններուն և իր երիցուկներուն վրայ. վտիտ փունջ մը տխրագին համակերպութեանց և հեծեծող մոռացօնքներու...

Ինքը՝ որ սէգ հոգի մըն է՝ վէս խտէալներու հեռուոր գգուանքը կը սիրէ, ու գերագոյն համակերպութեան մը մէջ, տոգորուած ճշմարիտ փոխադարձութեան մը երջանիկ համոզումով, կը մրմնջէ. —

Դուսն լայն ճամբէդ գընա՛, ա՛ղւոր,

ես կ'երթամ մութ արահետէս.

երջանիկ՝ այն համոզմամբ որ

Սրտով գոնէ ինծի հետ ես:

Եւ կամ մերթ կ'անդրադառնայ անցեալին. վայրկեանական դող մը կը թափանցէ իր հոգւոյն մէջ՝ զոր ո՛վ գիտէ գուցէ տարակոյսը ցանցած է արդէն. եւ յանկարծ կ'իյնայ մտահոգ ու տենդոտ հարցապնդումի մը մէջ.

...Ըսէ՛ ինծի, կարօտը հին սէրերնուս կ'անցնի՞ երբեմն ներսէդ, արագ ու թեթեւ. Գինովցընող պաշտումներէդ կը զարթնօս Լնցեալին մէջ, զարթումով մը կարճատե:

Տխրութիւններ ու հեծեծանքներ վերջապէս, որոնցմէ սակայն կը բխի քաղցր յուզում մը՝ որ չի՛ ջլատեր, չի՛ խորտակեր. ունենայինք գուցէ մտածողներ՝ որ դատապարտէին այս տխրութիւնը՝ զոր չեմ գիտեր թէ տխրութիւն կոչելո՞ւ ենք. տխրութիւն է միթէ հոգեկան վիճակի մը հարադատ նկարագրութիւնը, որ քերթողին համար երանութեան վայրկեան մը կ'արժէ, եւ գիտակից ու ազնուական մտածողին համար ալ թանկագին յուզման պահեր կը հայթայթէ:

Բանաստեղծը կը սիրէ նաեւ ըսել սրտազեղումով իր մտատիպարին՝ որուն մարմնին ամբարտաւանութենէն կը գինովնայ զմայլուն. —

...Շըքե՛ղ արձան, միշտ ըզմայլիչ գիծերով, Սմբարտաւան կուռք, մարմարէ ծիծերով...

Եւ սակայն այդ համակերպութենէն եւ զմայլանքէն վերջ յանկարծ կուգայ պահ մը՝ երբ հոգին տխուր գիտակցութեան դողով

մը կ'ուռնենայ, եւ քերթողը, որ իր ճակատագրին նմանութիւն մը գտած է բիւրեղէ կլկակին մէջ, կը հեծէ:

Անկիւնը մարդ մը աշխարհքին պահող քէն, Վայելելով իր նարկիլէն եւ ախորժ Ըզգալով այդ հեծկլտուքի նուագէն, Եւ օդին մէջ ցնդող մութէն թոյլ ու գորշ:

Եւ իսկոյն քեզ կը յիշեմ երբ անխըռով կ'ուռնկընդրես միշտ հառաչանքիս եւ կարծես Հաճոյք կըզգաս, այդ մարդուն պէս, դիտելով Մութը սրտիս կրակին՝ զոր դուն կ'արծարծես:

Ասոնցմէ դատ, իր ամէնէն տխուր ոտանաւորն է թերեւս «Ձատկի առթիւ»ը, որ իր միւս կարճ չափով ստանաւորներուն պէս հիմնալի պարզութեան հետ ունի խորունկ տխրութիւն մը՝ որ սակայն, ինչպէս միշտ, թոյլ ու ընկճուած հոգիի մը նկուն ողբը չէ:

Անկիւն մ'ուռնիմ սրտիս մէջ ուր՝
Կ'առանձնանամ ատեն ատեն,
Վերյուշումներ երբոր տըխուր
Երկրէս զիս պահ մը կ'անջատեն:

Հոն կը կենամ ես ծնրաղիւր
Ինչպէս առաջը խորանին.
Եւ՝ ուր միայն կը ծաղկի իր
Կէս սուգին մէջ եղբււանին:

Հոն շարուած են իրարու մօտ
Մութ փոսերը իմ իղձերուս,
Յիշատակներ՝ հիմայ աղօտ՝
Անուեններ, զոր չըսեր լեզուս:

Խօլ տենջանքներ, թոխը անհուն.
Ջոր ձեռքովս տուի հողին,
Մեռելներ՝ որ ուրիշներուն
Պէս յարութեան յօսը չունին:

Յետոյ ունի կրակոտ եւ ըզձալառ պահեր, մութին մէջ՝ ուր կնոջ յօյր գեղեցկութիւնը կայծերուն իսկ զինովի ոստոստումներ կուտայ:

...Եւ տեսնելով մարմինդ լեցուն խոստումով
Քեզի՝ նայող բոցը այդ լուռ կըրակին
Խելքը գլխէն գացածի պէս, աղւոր կին,
Կը ցատկըռտէր հոս հոն յիմար ոստումով:

Եւ յետոյ՝ անսովոր հանդիպումներ, անծանօթ կին մը՝ որ երազի պէս գեղեցիկ ու խուսափուկ կ'անցնի ամբոխին մէջէն: հասնել թէ նայուածքներ կը շօշափեն իր դէմքին գիծերը, եւ ահա անիկա փախած է արդէն, թռչունի մը պէս. եւ սակայն ի՞նչ փոյթ, բանաստեղծը իր երազը կը շարունակէ, անծանօթուհիին խուսափուկ թովչութիւնը՝ բուրմունքի մը պէս է զոր կը զգաս առանց ծաղիկին հպելու. երաժշտութեան մը նման, որ հեռուներէն կուգայ, անտես նուագարաններու կուրծքէն անջատուած ու գրաւիչ. եւ ո՞վ չէ ունեցեր այդ երազային դողը. տեսիլքի մը պէս վաղանցուկ այդ դէմքը գիտես թէ անգամ մըն ալ տեսնալիք չունիս. եւ այդ անմատոյց ու փախող էակին իտէալային քաղցրութիւնը անհունօրէն հեշտագին համակրութեան մը ծաղիկը կը փթթեցնէ հոգւոյն մէկ սիրական խորշը:—

Աղւոր, տգեղ, ի՞նչ փոյթ, բաւեց որ մտքէս
Մարմին մը տամ ես ուղածիս պէս իրեն.
Վրդովիչ հով, պշրանք մը լուռ, վերջապէս
Ամէն բաներն որոնց համար կը սիրեն:

Ո՞վ չէ սիրած իր «Ապրիմ—Մեռնիմ»ը, նոյնիսկ անոնք որ դոյզն համակրութիւն մը իսկ չէին տածած անխղճօրէն փեթուած պահներուն այդ լքուն ծաղիկը: Քանին՞ր գիտեմ ես որ այնուհետեւ իրենց լամբակին միակ ծաղիկը ըրած են այդ խոնարհ երկցուկը, որուն մահացումին մէջ կը փնտռէ մարդ բռնադատուած մարդարէութիւնը իր երկարատեւ կեանքին. եւ ապրիմին յիմարական խանդավառութեամբը լեցուելէ վերջ՝ անզգած անգոսնումով մը ճամբաներու փոշիին կամ ցանկորմի փշուտքին մէջ կը նետէ լերկ դեղին կօճակը «Ապրիմ—Մեռնիմ»ին...

«...Ամէն անգամ որ քաղեմ քեզի, ո՞վ պղտրի դեղին ծաղիկ, կը յիշեցնես ինձի այն ահարկու մերձաւորութիւնը զոր քու անունդ կը կազմէ. Ապրիմ—Մեռնիմ. երբոր ամէն տեղ Կեանքը կը ջանայ ըստ կարի խուսափիլ, հեռու կենալ Մահէն, քու վրադ միայն երկուքն ալ իրենց ճշմարիտ ու պատ-

չաճ տեղը կը գտնեն։ Այն քաղաքին պէս որ իր գերեզմաննոցը իր ծոցին մէջ զետեղած է՝ փոխանակ հեռուն, չա՛տ հեռուն, անտեսանելի անկիւն մը տանիլ դնելու, դուն ալ Ապրելուդ մէջ Մեռնիլդ պարփակած ես»։

Սակայն պէտք է խոստովանիլ թէ ինք, աշխատութեան դոյզն յանձնառութեամբ մը, թերեւս մեղի պիտի կարենար տալ արձակ բանաստեղծութեան հիմնալի էջերէն մէկը. ինչպէս իր միւս բանաստեղծութեանց մէջ, նմանապէս հոս ալ զգալի է ոճի անխնամութիւնը. այս չփոյթը, որ մեծ բան մը չի պակսեցներ իր խիստ տաղանդալից արտադրութեանց արժանիքէն, պիտի կրնար ջնջուելով՝ անոնց վրայ աւելցնել գեղագիտական վայելքի մը հմայքն ալ, և ես կը հաւատամ թէ Զօհրապ շատ ճարտարօրէն պիտի կրնար տալ իր ոճին արաբարուեստի խնամուած գեղեցկութիւն մը։ Շատ դիւրին է զգալ թէ գրչի մէկ հարուածով արտադրած է իր գրութեանց մեծամասնութիւնը, եթէ ոչ բոլորը։ Զանդրադառնալու և մէկ նայուածքով անցնելու իր այս բնաւորութիւնը ինքն ալ խոստովանած է արդէն ուրիշ պարագայի մը տակ, որ նկարագրի միեւնոյն մասնայատկութեան արդիւնքն է։

«... ևս կը կարծեմ որ կարգացուած գիրք մը մոռցուելու է. ասոր համար է արդեօք որ այն սուղ վայրկեաններուն մէջ զոր ընթերցանութեան կը յատկացնեմ, ակնարկ մը կը նետեմ ու կ'անցնիմ գրքի էջերուն վրայէն, զանոնք աւելի աչքէ անցուցած ըլլալու քան թէ անոնցմէ բան մը յիշելու նւաւատակով»։

Այս փակագծէն վերջ, որ սահմանուած չէ՝ երբեք իր տաղանդը արատաւորելու, պէտք կը զգամ յայտնելու ըզձանք մը՝ որ շատերունն է. պիտի փափաքէինք որ իր գեղեցիկ ոտանաւորներուն երիտասարդութիւնը անդադար խօսէր մեզի, փոխանակ այս լռութեան որ մեզի զգալ կուտայ անոնց կարօտը. և արդէն ինք, դեռ երիտասարդ ու կորովի, տակաւին պիտի կրնար տալ մեզ իր եղբւրաններուն մեկանոյ՜ երազէն քիչ մը երազ, և քանի մը կայծ՝ իր սիրավառ հոգւոյն կրակէն...։

ՇԱԽԱՍՊ ԾԻԱԾԱՆ

ՀԱՅ ԳՐՈՂԻՆ ՇՈՒՐՋԸ

ՆԵԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջերս հրապարակ նետուած խնդիր մը որ սերտ աղերս մը ունի հայ գրողին—գրագէտ կամ հրապարակագիր—բարոյականին, անոր ներքին կեանքին, վերջապէս ընկերային—անհատական մտերիմ հանգամանքներուն հետ, առիթը կ'ընծայէ ինծի հետաքրքրուիլ անով, քանի որ մասնաւոր շահեկանութեամբ մը և լուրջ ուսումնասիրութեան նիւթ հայթայթելու պայմաններուն տակ կը ներկայանայ։

Թէ հայ գրողը ընկերային—բարոյական խնդիրներ յուզած կամ քրքրած ատեն հարկ է իր անձին օրինակովը իսկապէս հայտ գտնուած ըլլայ բոլոր այն գեղեցիկ վիճակներուն հետ զորս գրչի մէկ հարուածով երեւան կը բերէ ան ուզած ատեն, իր ընթերցողներուն ուշադրութիւնը սեւեռել տուած պահերուն, զոր օրինակ, պատուական ու հաճելի կացութեան մը վրայ զոր նկարագրած է և որուն կ'ուզէ՝ որ ձգտին անոնց միտքն ու հոգին, ինչպէս սիրտը։

Տօմինօ՝ այս էջերուն մէջ՝ հայ գրագէտին ներքին կեանքին գիտակցելու պէտքին վրայ ծանրացած էր մասնաւորապէս, մինչ Յ. Տէր Յակոբեան Մանգումէի մէջ, այս առթիւ, նիւթը ընդլայնելով, երկարօրէն բացատրած էր թէ ինչո՞ւ հայ հրապարակագիրները չեն կրնար իրենց խօսքն ու գործը հաշտեցնել շատ անգամ։

Առանց ուղղակի viser ընելու ակնարկուած երկու յօդուածագիրներուն, — որոնցմէ առաջինին հայեացքներուն արդիւնքը ա՛ն կ'ըլլար որ ո՛ր և է գրագէտ բացարձակապէս բարոյականի տէր անձ հանդիսանայ, մինչ երկրորդը տարբեր եզրակացութեան մը կը յանգէր, յարելով թէ հրապարակագիրն համար ներելի է... բարոյական չունենալ, իսկ գրագէտին համար՝ ո՛չ—անմիջապէս ըսեմ թէ, ո՛րքան ալ գրողի մը բարոյականի տէր անձ չըլլալուն կամ ըլլալ չկրնալուն համար

արդարացուցիչ, մեղմացուցիչ պարագաներ վիստուռն ու քտուռն, անիկայ պետք է և անհրաժեշտ է որ ամէն տարակոյսէ վեր անհատականութիւն մը կացուցանէ ինքզինքը, մանաւանդ՝ երբ ընկերային ու բարոյախօսական դասեր կամ հրահանգներ տալու ելած է զոր օրինակ՝ իր ընթերցողներուն կամ հասարակութեան:

Եթէ ժառանգական աստեր, խառնուածքի բերմամբ բնածին անաղնիւ կամէութիւններ կամ մենամոլութեան, տխուր յուստեութեան պարագաներ ու ձգտումներ առիթ եղած ըլլային որ մեր գրողներէն ու մանք անոնց ենթարկուած գտած ըլլային ինքզինքնին, խնդիրը պիտի կնճռոտէր անշուշտ, քանի որ անոնց բարոյական սնանկութեան վնասը իրենց անձին իսկ յատուկ ըլլալուն հակառակ, աննշան վտանգ մը չէ՛ որ պիտի սպառնար, փոխանցիկ մանրէներ պարունակելուն իրենց ծոցին մէջ: Բարեբախտաբար այս կարգի վախեր ու մտահոգութիւններ յայտնելու պատճառ չկայ. ուրիշ խնդիր թէ բարոյականի մասին թեթեւ ըմբռնումներ կամ վերաբերումներ ունեցող գրողներ չեն պակսիր:

Մեր գրողները երկու որոշ դասակարգի բաժնելով—հրապարակագիրները և գրագէտները—անոնցմէ առաջին մասը պատասխանատուութենէ զերծ՝ և երկրորդը պատասխանատու նկատելը (բարոյապէս անշուշտ) կարծիք մըն է որ ընդհանուր հաւանութեան արժանանալու մեծ chance ցոյց չի տար: Սկզբունքով, քանի որ երկու դասակարգերն ալ գրիչ կը շարժեն, գաղափարներ կը յայտնեն, կը վիճին ո՛ր և է խնդրի մասին, վերջապէս ուղղութիւն մը կը գծեն որուն կը հրաւիրեն հետեւիլ իրենց ընթերցողները, աւելի տրամաբանական պիտի ըլլար պահանջել որ իրենց հմտութեան ու ձեռնաստութեան չափով սրտի ու հոգիի՝ ալ ազնուութիւն և մաքրութիւն ունենային, անշահախնդրութեամբ և ցկաւագիւրով յատկանշուելով իրենց խօսքերուն ինչպէս գործերուն մէջ: Ինչո՞ւ խտրութիւն դրուէր երկու դասակարգերուն միջև: Որովհետեւ հայ հրապար-

ակագիրը նիւթական անձկութեան, ինչ ինչ հոգերու և զրկումներու ենթարկուելու դատապարտուած է յաճախ, ներելի՞ է իրեն ինքզինքը հերքելու վիճակին մատնուիլ ակամայ:

Կոչումի դէմ այս մեղանշումները չեն արդարանար, ո՛րքան ալ պատճառաբանութիւնները զօրաւոր հիմերու վրայ կառուցուածի պատրանքը տան: Կ'ընդունիմ թէ հայ հրապարակագիրն նիւթական վիճակը վարդապետն երանգներով չի՛ ներկայանար և ան ստիպուած է վտիտ ամսաթիշակով մը կամ յօդուած գլուխ ստացած գումարով մը ապրիլ և ապրեցնել իրենները, Բայց հրապարակագրութեան դերն ու կոչումը յայտնապէս զօրաւոր պարտքեր դրած ըլլալով անով զբաղողին վրայ, քանի որ այդ պաշտօնը օրինակի համար խանութպանի կամ կրպակի կեանքով ապրողներուն գործին չի նմանիր երեք, պարզ է թէ մեծ կարեւորութիւն ունի և անոր նուիրուած ու է անձ հարկ կ'ըլլայ որ թէ՛ ինքզինքը և թէ՛ իր կոչումը արժեցնէ, արդարացնէ:

Պարկեշտ գրողի մը աչքին՝ այդ կէտը, հակասութիւն ցայտեցնող այդ պարագան զուրկ չպիտի մնար անշուշտ ուշադրաւ ըլլալէ: Բարոյական ընտիր ձիւքերով ու գեղեցիկ յատկութիւններով օժտուած ո՞ր գրագէտ, որ միեւնոյն ատեն տէր է փայլուն տաղանդի մը, ինքզինքը չըջապատուած չպիտի զգար մօտ ու հեռաւոր համակրութիւններով և զնահատումներով: Այս առաւելութիւնները մի միայն իր տաղանդին ի պատիւ չէ՛ որ պիտի ընծայուէին: Եւ ցորչափ, ընկերային կամ բարոյական հարցի մը առթիւ իր գաղափարները յայտնած ատեն, ձայնը չգողար, չնշտերը վառ հնչունութիւն մը ունենային չքեղ՝ արձագանգի մը նման ու նայուածք՝ արտայայտիչ տպաւորութիւն մը, իր ամբողջ իսկութենէն բղխող անկեղծ ու միեւնոյն ատեն զօրեղ մտածումին իրրեւցոյց՝ ան իր արժէքին ու արժանիքին վայել յարգանքով մը պիտի ընդունուէր տնտեսաբանութեան:

Այս ըսել չէ սակայն թէ բարոյականէ նուազ բան հասկցող, անձնապէս աստուար

հողի տէր ու է գրող իրաւունք չունի զնահատուելու երբ տաղանդաւոր է: Հասարակութիւնը հաւասարապէս երկուքին ալ զաղափարներն ու զգացումները նկատողութեան կ'առնէ, կը բաւէ որ օգտակար ու գործնական բաներ ըլլան հրամցուածները: Ու կը հաւանի՝ ալ: Բայց հոն ուր պարկեշտ գրագէտին համար համակրանք մը կայ յայտնուած, հետաքրքրութիւն մը, տեսակ մը բռնազբօսիկ վերաբերում կ'ըլլայ աւելի՝ դէպի ա'յն միւս գրողը որ իրականին մէջ հաշտ չէ գտնուած այն պայմաններուն կամ վիճակներուն հետ զորս ներկայացուցած էր իր գրիչով կամ խօսքով:

Այս համոզումը մտքէս վանելու ջանք չպիտի խնայէի, եթէ ծանօթացած չըլլայի ներքին կեանքի լայն զիծերուն հայ հրապարակագրի մը որ վերջերս մեռաւ: Ժամանակին զեղծումները մատնանշելով ձաղկող մարդ մը, որ շատերուն հակակրութիւնը հրաւիրած էր իր վրայ և որ թերեւս յաջողէր հակազդել անոր՝ եթէ սակայն զօրած ըլլար իր անձը զերծ կացուցանել այն թերութիւններէն կամ տկարութիւններէն որոնց ենթարկուած էր: Հակասական վիճակ մը, որ անհրապօր ըլլալուն հետ, նուազ մեղադրելի չէր միանգամայն:

Այս պայմաններուն մէջ, լաւագոյն պիտի ըլլար անշուշտ որ, մասնաւորապէս բարոյականի հարցերով զրադիլ փորձուող ո՛ր և է լուրջ գրող իր համբաւին միայն բերող կացութեան մը մատնուելէ զգուշանար, եթէ չպիտի ուզէր քննադատելի դառնալ իր կարգին: Մարդկային փառասիրութիւնն ու կեղծաւորութիւնը ինչե՛ր ընել չեն տար ու դիմալիները ո՛րչափ անթափանց կը կարծուին յաճախ: Ընդունինք թէ զմայլելի կերպով նախանձառիթ է՝ խօսքերու և գործերու միջև կատարեալ ներդաշնակութիւն մը պահելու յաջողութիւնը, մանաւանդ երբ իրապէս անկեղծ են անոնք: Պէտք է ձգտիլ այս գեղեցիկ ու բարձր տեսլականին: Փափուկ կէտ մը, որուն վրայ կ'արմէ երկարօրէն խորհրդածել:

Դիտեմ. սկստիկներ, սնուցներ և բա-

րոյականը հինցած, skifosk առաքինութիւն մը դաւանողներ շատ մը առաքնութիւններ պիտի ունենան առաջ բերելիք իմ այս պարզ հայեցողութիւններու դէմ, բայց դիտելի է թէ մեր ընկերային կազմակերպութեան և, եթէ ոչ աւանդական, գէթ աննախապաշարօրէն մաքուր ըմբռնումներու հոսանքին դէմ շատ տկար թումբ մը պիտի ըլլար իրենց վարդապետութիւնը, որ առաջին ընդհարումի մը, դիւրաւ պիտի քայքայուէր ու չքանար:

Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

Մեր անկեղծ ցաւակցութիւնները կը յայտնենք Սիմոն Էֆ. Անտօնեանի, իր ծաղկաւոր զաւակին՝ Օր. Սաթենիկ Անտօնեանի մահուան առթիւ, ինչպէս նաեւ Անտօնեան Հայկ և Նշան Էֆ. ներուն որոնք սուգով համակուցան այս դառն կորուստով: Վաղամեռիկ օրիորդին յուզարկաւորութիւնը կատարուեցաւ կիրակի օրը, Մաքրիգիւղի եկեղեցին, աղգականներու և բարեկամներու ստուար բաղմութեան մը ներկայութեամբ: Արարողութեանց աւարտումէն ետք, եկեղեցւոյ բակին մէջ յուզիչ դամբանական մը կարգաց թաղին ազգ. վարժարանին սանուհիներէն մէկը՝ իր ողբացեալ ընկերուհիին դադաղին վրայ զոր բոլոր սանուհիները չըջապատած էին արտասուածքով: Իսկ Ռօպէրթ Գօլէճի բարձր դասու ուսանողներ ծոպերը բռնած էին ու կերօններ կը կրէին՝ իրրեւ վշտակցական արտայայտութիւն մը հանգուցելոյն եղբոր՝ Պ. Յակոբ Անտօնեանի որ իրենց դասընկերն է:

Ի յարգանս հանգուցելոյն ծնողաց, ներկայ էր և բաւական տեղ թափօրին ընկերացաւ Մաքրիգիւղի գայմադամ պէյը. նոյնպէս Յունաց եկեղեցւոյ աւագերէցը:

Տիւրիկցի կիրակոս աղա Մուրատեան մէկ տարեկան Մաւսիս նուիրած է իր ծննդավայրի Օտուր գիւղի դպրոցին:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Տէր Եւ Տէօրեմ—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնաւ ի ԲՈՒԹ 1875ին
կը գործէ ուղղակի ճրան. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ
Ընթացիկ ապահովգր. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Դրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՄ Ս. ԳԱԼՖԱՆՍՆ
Պոլս, Հանօբուլո խան Եօ. 53
Գաւառները պատուաւոր գործակալներ կը
միտառուին: 11—50



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ
Պարսկական Դեսպանատան
Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61
Զբոսանեան աքաւորման
Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան օր եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոա-
ները: Տօրեկները ակոյալ քաշել տալու հա-
մար որոշ վարձը մը չկայ. քաշել տուողին
եւամբէն կախեալ է: Վկայեալ տառամարու-
ժակի Տիպին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն
դարմանատան մէջ: Աղփասներուն ձիւ 2—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ


Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՏ ԳՈՂՈՅ ԹԻԻ 200

Կալանա-Սէրայի Լիւէին դէմ
Գե. Եե. Շք. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2
Բե. Գե. Ուր. օրերը 6են մինչեւ 11 1/2
Եիրակի օրերը ժամադրութեամբ 10—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻԲՍ”



Հիմնաւ ի ԼՈՆՏՈՆ 1782 ին
ՅԷ ԳՈՐԾԻ Ի ՊՈԼԻՍ 1869ին Ի ՎԵՐ
ՈՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Դրամագլուխ եւ պահեստի դրամ
Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահա-
վագրեալն Ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ միտառւց մէջ
իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ ամէն տեսակ տնայրտ եւ
շարժուն ստացուածք, յոյժ նպատաւոր
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՅՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ: Զաւր վճա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
ոսկի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւա-
ռաց. Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիթալիս խան, Պանֆ Օբոմանի քով
Դալաքիա:

Փոխ դործակալը ի Պոլսո

ՈՒՈՒՐ. ԱԲԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԻՔԵԼԵԱՆ

Էմին պէյ խան

Ֆեսզիլեան խան

Զենիշ Բիզիքու

Ա. ԷՆԲՍԷՐՃԵԱՆ

1—10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՖՈՐՄԱ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն» ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒՅ ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեռով: Նպաստաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք Ձերժ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ ան անձինք, որ շահաբաժիններու բաւգում (accumulation d'es b n fices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեանք գործող ընկերութեանց կ'ապա- հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասմա Բաքրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լոյսյէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

2—10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԵՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային ահապաններու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունքն է Ի Կ. Պոլիս, Բուքսի Լիօն

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Ֆրանկիա, Պոլիս, Ալեքսան Խան

2—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎՃԱԱՌԱՏՈՒՆ

ՀԵՐ ԺԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհարեղեցներու, ամեն տեսակ կահ կարասիներու եւ ամենեւնի նորաձեւ

նազուսներու, ելլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճոխացնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում ապրու նպատակաւ, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զոտ, կրներու եւ այլերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ԶԳԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամպաներ, օֆիսէներ եւ այլն.) ճոխ մթերանոց մը հաստատած ենք. խիստ զիւրմամուշելի գիներով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերայիշեալ վաճառատները, ուրկէ տնտեսակոյս առնուին գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրէն 5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն աղամանդեայ, գոհարեղէնները երբ գործածուած բայց առկա մնացած ըլլան՝ հարիւրին 10 զեղչով եւ կռնուին: Իսկ ապառիկ ծախուած եւ առկա մնացած միմիայն աղամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կռնուին:

2—10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարահական վճարմանց համար՝ հաւաքիչներ ընդմիշտ պատրաստ են:

ՄԵՐ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՒՅ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ. ԿԵԱՆՔ, ՓՈՒԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈՒԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԵՆԱԻՌՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՕՄ, բաւելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում


314,768,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրո

56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա,

2—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի միայն ըստ էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Co.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՀԱՐԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍԼԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԻՆԻՍԱՐ

Չարլը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարեալ Երաւաստորոքիւն։

Մասնահիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ, Տիւղօղլուի տունը։

4—10

ԿԱՐՍՊԵՏ Է.Յ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թուրք. մանած գիրքերէն հետեւեալները կը գրաւուին Տէր-Մինասեան գրատունը եւ մայրաքաղաքի միւս հայ գրավաճառներուն քով.

հասոք	դր.
Կարճիք մարդոց երգումը	2
Ընթանեղանի	2
Փարիզի մասնաւորութիւնները	1
Թափառական Հիւայ	4
Արուսթեանին տղան	3
Հանրապետութիւն օճիքը	1

Սկզբունք Բու. Տնտեսութեան 1 4
Ընթանեղանի գաղափարներ 3 15
8—10

ՀԱՄԱՌՕՏ ՕՍՄ. ՊԱՍՏՈՒԹԻՒՆ

Ի պէս Ազգ. նախապետական վարժարանաց գրեց ԴՐԻԴՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ
Կեդրոնատեղին է Կ. Պօլիս Չաքմաքըլար
Չեւմպիւլլի խան, Փափագեան Միհրան
էֆի Կաղմատունը։ Դիւն 100 ՓԱՐԱ 9—10